

նեայն, աշխարհական բազուկի բովանդակ զօրութեամբը կը քաջալերէր այդ եղբայրասպան կռիւներն առանց այս կամ այն կողման մէջ զանազանութիւն ընելու, իրաւունքը տալով միշտ անոր՝ որ աւելի կը վճարէր, որով բոլոր այս կռիւներու երեսէն միլիոններ եւ միլիառներ ազգէն կը ստանար:

Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան, եղբայր երանելի Տեառն կոմիտասայ նահատակ քահանայի, համբաւաւոր Ապրօ Չէլէպիի ձեռնասունը՝ գրագիրն՝ աջն ու որդւոցը դաստիարակը, Ապրօ Չէլէպիին հետ գործունեայ եւ բուռն պաշտպանն Եղիազար կաթողիկոսին (Երուսաղէմ) ընդդէմ Յակոբ Զուղայեցի կաթողիկոսի (Էջմիածին), մինչեւ 1680 այս նիւթերու վրայ շատ նամակներ գրած էր իր պաշտպանեալ Եղիազարին, որ Երուսաղէմ կը նստէր: Տակաւին ինձ միայն ծանօթ է Երեմիա Չէլէպույ մէկ անծանօթ մնացած գրութիւնը, որուն մէջ այս դէպքերու վրայ կը գրէ 1670ին, յիշելով դառն մահն այն անձինքներու, որոնք Յակոբ Զուղայեցույ կուսակից էին եւ հակառակորդ Եղիազարի: «... Լուր այժմ առ այս ժամանակօք: Յակոբ եւ Եղիազար կաթողիկոսացն աղագի զհայոց ազգիս խռովութեանց գրգռիչն թէ որպէս պատժեալ մեռան: Նախ անյիշելի ոմն Շահին, որ պարտքի տակ իյնալով տաճկացաւ... Եէնիշէհիր հիւանդացաւ, ուղեց Պոլիս գալ, երբ Չէքմէճէն անցնելով Եէնիղափին եկաւ, նաւակին մէջ «սատակեցաւ» դիակը նաւամատոց